



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական պոստ 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(Գոհար Հակոբյանի 07.06.2017թ.-ի վարչական բողոքը բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«12» հուլիսի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017թ. թիվ 29/1 որոշման վերաբերյալ քաղաքացի Գոհար Հակոբյանի 07.06.2017թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

Քաղաքացի Գոհար Հակոբյանը (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 23.05.2017թ. թիվ 29/1 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) դեմ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 07.06.2017թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, 2017 թվականի փետրվարի 8-ին փոստային ծառայության աշխատակցի կողմից ստացել է N 13-1/306817 ծրարը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմից, որի մեջ առկա էր ծանուցում՝ 2017թ.-ի փետրվարի 6-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների

իրականացման (այսուհետ՝ նաև ՊԵԿ ԻՀ և ՎՎԻ) վարչության իրավախախտումների հայտնաբերման ու վերլուծության բաժին ներկայանալու վերաբերյալ:

Ըստ Բողոք բերած անձի՝ բանավոր ճշգրտման արդյունքում պարզվել է, որ իրեն առաջադրվել է պարտավորություն՝ 20.808.744 դրամի չափով՝ մեկ տարում երկու բնակարան վաճառելու և ԱԱՀ չվճարելու պատճառով:

Բողոք բերած անձը 16.02.2017թ.-ին նշվածի վերաբերյալ գրավոր դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետ Ա. Բաղդասարյանին, սակայն ի պատասխան իր դիմումի 23.03.2017թ.-ին ստացել է գրություն, որտեղ նույնպես նշվում է, որ Բողոք բերած անձը համարվում է ԱԱՀ վճարող:

Բողոք բերած անձը 2017թ. փետրվարի 17-ին ներկայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ և ՎՎԻ վարչության հետաքննության բաժին, որտեղ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հատկանիշներով նախապատրաստվում է նյութեր: Բողոքի համաձայն՝ 2017թ.-ի փետրվարի 23-ին N 1526/132 ծանուցագրով Բողոք բերած անձը ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ և ՎՎԻ վարչության հետաքննիչ Ա. Գևորգյանի որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ Գոհար Հակոբյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Բողոք բերած անձը 2017թ. ապրիլի 22-ին ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանի թիվ 509-01 որոշումը՝ 20.808.744 ՀՀ դրամ պարտավորության գանձման վերաբերյալ:

Բողոք բերած անձը 2017թ. ապրիլի 26-ին դիմում-գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով և 23.05.2017թ. մասնակցել է լսումներին՝ վիճարկելով իր նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի կիրառման իրավաչափությունը:

Գանգատարկման հանձնաժողովը 23.05.2017թ. որոշմամբ մերժել է գանգատը՝ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 19.04.2017թ. որոշումը թողելով անփոփոխ:

Որպես բողոքի իրավական և փաստական հիմքեր Բողոք բերած անձը նշել է, որ ք. Երևան, Լեփսիուսի 5-րդ փողոց, 8/4 շենք, 11 բնակարանը ձեռք է բերել 2010թ.

հուլիսի 7-ին: Այդ բնակարանը գտնվում էր ապրելու համար ոչ պիտանի վիճակում, ուստի բնակարանը վերանորոգելու համար դիմել է «Զարգացման հայկական բանկ»-ին և ձևակերպել վերանորոգման հիփոթեքային վարկ: Բողոք բերած անձը պնդում է, որ ինքը 3 երեխաների մայր է (որոնցից մեկն անչափահաս է), և չունենալով աշխատանք և ապրուստի բավարար միջոցներ, չի կարողացել կատարել վարկային պարտավորությունները և հարկադրաբար վաճառել է բնակարանը 2014թ. հունվարի 15-ին՝ շուկայականից ցածր գնով:

Դրանից հետո՝ 2014թ. հունվարի 16-ին համաձայնության գալով ք. Երևան, Մամիկոնյանց փ. 38/3 շենքում գտնվող ոչ բնակելի տարածքի սեփականատիրոջ՝ Հենրիկ Բաղումյանի հետ, Բողոք բերած անձի և Հենրիկ Բաղումյանի միջև կնքվել է նախավճարի պայմանագիր, որով Մամիկոնյանց 38/3 շենքում գտնվող թիվ 54 ոչ բնակելի տարածքի գնման նպատակով նրան վճարել է 7.500 ԱՄՆ դոլար՝ որպես առուվաճառքի պայմանագրի նախավճար, իսկ մնացած գումարը պարտավորվել է վճարել բանկում հիփոթեքային վարկ ձեռք բերելուն պես, սակայն այցելելով «Յունիբանկ» ՓԲ ընկերություն, պարզել է, որ հիփոթեքային վարկ ձևակերպելու համար այդ հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքի կարգավիճակը պետք է փոխվի և դառնա բնակելի, ինչից հետո նոր բանկը կկարողանար ձևակերպել հիփոթեքային վարկը: Բողոք բերած անձը նշում է, որ սեփականատիրոջ հետ եկել է համաձայնության և նա իրեն պատկանող ոչ բնակելի տարածքի կարգավիճակը փոխել է բնակելի կարգավիճակի և ստացել է Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 բնակարան նոր հասցե: Ըստ Բողոք բերած անձի պնդման՝ 28.03.2014թ.-ին ինքը ներկայացել է «Յունիբանկ» ՓԲ ընկերություն, և նոտարների ներկայությամբ կատարվել է գործարքը, որով «Յունիբանկ» ՓԲ ընկերությունը պարտավորվել է բնակարանի մնացած արժեքը փոխանցել վաճառողին:

Բողոք բերած անձը նշում է, որ սոցիալական վատ վիճակի, անաշխատունակության պատճառով, բանկային վճարումների ուշացման և նույնանման վիճակից խուսափելու համար 2014թ. հուլիսի 31-ին հարկադրաբար վաճառել է նաև Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 բնակարանը, որպեսզի վճարի հիփոթեքային վարկը:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ տվյալ գործի մասին առաջին անգամ տեղեկացել է 2017թ. փետրվարի 8-ին:

Բողոք բերած անձը պնդում է, որ ք. Երևան, Լեփսիուսի 5-րդ փողոց, 8/4 շենք, 11 բնակարանը ձեռք է բերել 2010թ.-ին և վաճառել 2014թ.-ին, իսկ Մամիկոնյանց փողոց 38/3 շենքում գտնվող թիվ 54 տարածքը ձեռք բերման պահին ունեցել է ոչ բնակելի կարգավիճակ, ուստի մեկ օրացույցային տարվա ընթացքում ձեռք չի բերել և վաճառել նույնանման գույք, չի հետապնդել եկամուտ, այլ հակառակը՝ հիփոթեքային վարկերի միջոցով փորձել է վերականգնել երեք երեխաների կացարանը:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը խնդրել է չեղյալ համարել (*հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում «վարչական ակտը չեղյալ համարելու» հասկացություն, Հանձնաժողովը բողոքի ընդհանուր պրամարանությունը և Բողոք բերած անձի կողմից վկայակոչված իրավական հիմքերը հաշվի առնելով նշված պահանջը գնահատում է որպես վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ*) Գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017թ. թիվ 29/1 որոշումը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի հուլիսի 12-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Բողոք բերած անձը:

Վերջինս լսումների ընթացքում հայտնեց, որ պնդում է բողոքով ներկայացված իր պահանջը և ի հիմնավորումն դրա ներկայացված փաստարկները:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28032014-01-0125 վկայականով հաստատված է 26.03.2014թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ

գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով՝ գրանցված իրավունքի սուբյեկտ՝ Գոհար Յուրիկի Հակոբյան, անշարժ գույքի գտնվելու վայրը և անվանումը՝ Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 բնակարան, գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը՝ առուվաճառքի և հիփոթեքի 24.01.2014թ. թիվ 1392 պայմանագիր, շինությունների նպատակային նշանակությունը՝ բնակելի, ըստ առանձին շինությունների բնութագրի՝ տեսակը բնակարան:

3.2. «Յունիբանկ» ՓԲ ընկերության և քաղաքացի Գոհար Յուրիկի Հակոբյանի միջև 24.03.2014թ. կնքվել է թիվ 040-379/ԱՀ վարկային պայմանագիրը, համաձայն որի՝ «Յունիբանկ» ՓԲ ընկերությունը Գոհար Հակոբյանին տրամադրում է 37.000 ԱՄՆ դոլար գումար վարկ, որը ենթակա է տրամադրման քաղաքացի Հենրիկ Արշամի Բաղումյան Սանգբարանեից գնվող և վերջինիս սեփականության իրավունքով պատկանող Երևան, Արաբկիր Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, երաշխավորության պայմանագրերը պատշաճ ձևակերպելուց հետո: Վարկը տրամադրվում է 180 ամիս ժամկետով: Որպես վարկի ժամանակին վերադարձի, դրա օգտագործման համար տոկոսների և տույժերի վճարման ապահովման միջոցներ, պայմանագրի 2.4.1 կետի համաձայն հադիսանում են՝ քաղաքացի Հենրիկ Արշամի Բաղումյան Սանգբարանեից գնվող և վերջինիս սեփականության իրավունքով պատկանող Երևան, Արաբկիր Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի գրավը, որի համար 24.03.2014թ. «Յունիբանկ» ՓԲ ընկերության հետ կնքվել է թիվ 040-379/ԱՀ անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, ՀՀ քաղաքացի Աշոտ Տիգրանի Պետրոսյանի անձնական գրավոր երաշխավորությունը և ՀՀ քաղաքացի Տիգրան Ռոլանդի Պետրոսյանի անձնական գրավոր երաշխավորությունը:

3.3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14052013-01-0183 վկայականի համաձայն՝ հաստատվել է 14.05.2013թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով՝ գրանցված իրավունքի սուբյեկտ՝ Հենրիկ Բաղումյան Սանգբարանե Արշամի, անշարժ գույքի գտնվելու վայրը և անվանումը՝ Երևան, Արաբկիր

Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 ոչ բնակելի տարածք, գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 09.04.2013թ. թիվ 1716 վկայագիր և սեփականության իրավունքի 09.04.2013թ. թիվ 1717 վկայագիր, շինության նպատակային նշանակությունը՝ բնակելի, բնութագրերը ըստ առանձին շինությունների՝ 86.7քմ ոչ բնակելի տարածք:

3.4. Համաձայն ՊԵԿ իրավաբանական վարչության առաջին բաժնի պետ Ռ. Գրիգորյանի կողմից Գոհար Հակոբյանին հասցեագրված գրության՝ վերջինիս տեղեկացվել է, որ «...ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի Գոհար Հակոբյան Ֆ/Ա-ի (հասցե՝ Երևան, Լեփսիուսի 5 փող., 8/4 11, անձ. AM0210965) չկատարված հարկային պարտավորությունը 10.11.2016 թվականի դրությամբ կազմում է 20.808.744 դրամ, որից ապառք՝ 8.168.300 դրամ, փոյժ՝ 4.472.144 դրամ, փուզանք՝ 8.168.300 դրամ: Վերոնշյալ հարկային պարտավորությունների նախնական հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկությունները, համաձայն որի՝ Գոհար Հակոբյան Ֆ/Ա-ի կողմից 2014թ. ընթացքում օտարվել է 2 բնակարան, որի պայմանագրային արժեքը կազմել է 49.000.000 դրամ:

«Ավելացված արժեքի հարկի» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն, փվյալ գույքի օտարման գործարքը այլ հավասար պայմաններում համարվում է ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք և նույն օրենքի 31.1 հոդվածին համապատասխան ֆիզիկական անձինք հանդիսանում են ԱԱՀ վճարող: Համաձայն նույն օրենքի 9-րդ հոդվածի, վերոգրյալ գործարքի գծով պետք է հաշվարկվի ԱԱՀ՝ հատուցման գումարի նկատմամբ 16.67 տոկոս դրույքաչափով: Գոհար Հակոբյան Ֆ/Ա-ի կողմից չի ներկայացվել 2014թ.-ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկը և չի կատարվել վճարումներ, ինչի արդյունքում առաջացած հարկային պարտավորությունների նկատմամբ կիրառվել են փոյժ և փուզանք՝ համաձայն «Հարկերի մասին» օրենքի 24-րդ և 23-րդ հոդվածների:

Հարկերը սահմանված ժամկետներում չվճարելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170³ հոդվածով: Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Դուք ծանուցագիրը ստանալուց եռօրյա ժամկետում ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչություն ք.

Երևան Մոլդովական 41, 218 սենյակ հասցեով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը մասնակցելու, հեռ.՝ 011 54 92 42:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Գայանե Հակոբյան Ֆ/Ա-ի չկատարված վերը նշված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29՝ հոդվածով նախատեսված վարչական ակտը ընդունելու նպատակով: Ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցագիրը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունները և առարկությունները: Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել ընկերության դրամական միջոցների և գույքի արգելադրում՝ համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի»:

3.5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 1-ին կարգի մասնագետ Ա. Ավետիսյանի 02.02.2017թ. թիվ 13-1/3068-17 գրությամբ քաղաքացի Գոհար Հակոբյանին ուղարկվել է ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ. «Ձեր վերաբերյալ Նոր Նորքի ՀՏ-ից ստացված փաստաթղթերի հետագա ընթացքը լուծելու համար խնդրում եմ 2017 թվականի փետրվարի 6-ին, ժամը 15:00-ին, անձը հաստատող փաստաթղթով ներկայանալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ ու ՎՎԻ վարչության իրավախախտումների հայտնաբերման և վերլուծության բաժին՝ հարկային ծառայության 1- ին կարգի մասնագետ Արմեն Ավետիսյանի աշխատասենյակ (ք.Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ. 011 80-77-95, 093 258000)»:

3.6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետաքննիչ Ա. Գևորգյանի 14.02.2017թ. թիվ 13-4/4526-17 գրությամբ քաղաքացի Գոհար Յուրիկի Հակոբյանին ուղարկվել է ծանուցում առ այն, որ «ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնում ՀՀ քր.օր.-ի 205-րդ հոդվածի հատկանիշներով

նախապատրաստվող նյութերի շրջանակներում, հրավիրվում եք սույն թվականի փետրվարի 17-ին, ժամը 09:00-ին, անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով հեղաքննիչ Ա.Գևորգյանի մոտ (ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 7-րդ հարկ, 704 աշխատասենյակ)»:

3.7. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության առաջին բաժնի մասնագետներ Ա. Թորոսյանի, Վ. Ավետիսյանի և առաջին կարգի մասնագետ Ռ. Մարջանյանի կողմից 11.05.2017թ. կայացվել է «Հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու վերաբերյալ» թիվ 035107 որոշումը, որով մասնավորապես նշվել է, որ. «Ֆիզիկական անձ Գոհար Հակոբյանի (հասցե՝ ք. Երևան, Մայրան նրբ., 11շ., 11բն., անձ՝ AM0210965) պետական բյուջեի հանդեպ ունեցած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 10.11.2016թ. դրությամբ չկատարված պարտավորությունները կազմում են 20.808.744 դրամ (ԱԱՀ՝ 20.808.744 դրամ, որից ապառք՝ 8.168.300 դրամ, տույժ՝ 4.472.144 դրամ, տուգանք՝ 8.168.300 դրամ:

19.04.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՎ պետի կողմից որոշում է կայացվել ֆիզիկական անձ Գոհար Հակոբյանից 20.808.744 դրամ գանձելու վերաբերյալ:

Ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, հաշվի առնելով հարկերը ժամանակին չվճարելու հանգամանքը՝ իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վերը նշված վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը... որոշեցի՝ արգելանք դնել ֆիզիկական անձ Գոհար Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վրա, դրամարկղի, ՀՀ բանկերում առկա բոլոր բանկային հաշիվների և այլ գույքային իրավունքների վրա՝ 20.808.744 դրամի չափով, նրան արգելել տնօրինել, փոխապետել արգելադրված գույքը»:

3.8. Քաղաքացի Ռաֆայել Արամայիսի Գասպարյանի և քաղաքացի Գոհար Հակոբյանի միջև 07.07.2010թ. կնքվել է բնակարանի առուվաճառքի պայմանագիր, որով Ռաֆայել Գասպարյանը վաճառել է, իսկ Գոհար Հակոբյանը գնել է Երևան քաղաքի Լեփսիոսի 5 փող., 8/4 շենքի թ. 11 բնակարանը: Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ նշված գույքը վաճառվել է 5.700.000 ՀՀ դրամով: Պայմանագիրը վավերացված է Արաբկիր նոտարական տարածքի նոտար Կարինե Ադամյանի

կողմից (գրանցված է սեղանամատյանում՝ N3281):

3.9. Քաղաքացի Գոհար Յուրիկի Հակոբյանի և Արմինե Սաշայի Ոսկանյանի միջև 15.01.2014թ. կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Գոհար Հակոբյանը վաճառել, իսկ Արմինե Ոսկանյանը գնել է ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն Լեփսիուսի 5-րդ փողոցի 8/4 շենքի թիվ 11 բնակարանը: Համաձայն նշված պայմանագրի 6-րդ կետի՝ գույքը վաճառվել է 33.374.000 ՀՀ դրամ: Պայմանագիրը վավերացվել է Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սուսաննա Դանիելյանի կողմից (գրանցված է սեղանամատյանում՝ N 180):

Նշված պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման մասին որևէ տեղեկություն կամ փաստաթուղթ վարչական գործի նյութերում չհայտնաբերվեց:

3.10 Քաղաքացի Գոհար Յուրիկի Հակոբյանի՝ որպես վաճառողի և ՌԴ քաղաքացիներ Հակոբ Խաչատրյանի և Նայրա Խաչատրյանի միջև՝ որպես գնորդի, 31.07.2014թ. կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վաճառողը վաճառել է, իսկ գնորդը գնել է ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր Մամիկոնյանց փողոցի 38/3 շենքի թիվ 54 բնակարանը: Պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքը վաճառվել է 49.000.000 ՀՀ դրամով: Պայմանագիրը վավերացված է Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սուսաննա Դանիելյանի կողմից (գրանցված է սեղանամատյանում՝ N 5003):

3.11. Արմեն Բաղումյանի և Տիգրան Պետրոսյանի միջև 16.01.2014թ. կնքվել է նախավճարի պայմանագիր, համաձայն որի՝ Արմեն Բաղումյանը տվել է Տիգրան Պետրոսյանին 7.500 ԱՄՆ դոլար գումար՝ Արմեն Բաղումյանին պատկանող ք. Երևան, Մամիկոնյանց 38/3 շ., 54 ոչ բնակելի տարածքի առուվաճառքի համար նախավճար՝ ի ապահովումն դրա կատարման: Նախավճարի պայմանագիրը ստորագրվել է կողմեր Արմեն Բաղումյանի, Տիգրան Պետրոսյանի, ինչպես նաև վկաներ՝ Արամ Պետրոսյանի, Էդվարդ Գրիգորյանի, Դավիթ Գևորգյանի և Գոհար Հակոբյանի կողմից:

3.12. Երևանի քաղաքապետի կողմից 17.02.2014թ. կայացվել է որոշում՝ Մամիկոնյանց փողոցի հ. 38/3 շենքի հ. 54 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքի գործառական նշանակությունը փոխելու և բնակելի ֆոնդում ընդգրկելու մասին:

3.13. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 09.04.2013թ. հաստատվել է սեփականության իրավունքի վկայագիր (գրանցված է սեղանամատյանում՝ N 1717), համաձայն որի՝ քաղաքացի Հենրիկ Արշամի Բաղումյան Սանգբարանեն, որը հանդիսանում է քաղաքացի Ջանեթ Ավանս Հակուիյանի՝ մահացած 11.04.2012թ.-ին, կենդանի մնացած ամուսինը, սեփականության իրավունք ունի հիշյալ ամուսինների գույքի 1/2 բաժնի նկատմամբ: Ընդհանուր համատեղ գույքը, որի համար տրված է վկայագիրը, բաղկացած է՝ Երևան, Մամիկոնյանց փողոց 38/3 շենքի թիվ 54 հասցեում գտնվող անշարժ գույքից:

3.14. ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ և ՎՎԻ վարչության հետաքննության բաժնի հետաքննիչ Անդրանիկ Գևորգյանի կողմից 20.02.2017թ. կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, որով Գոհար Յուրիկի Հակոբյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է և քրեական հետապնդումը չի իրականացվել՝ Գոհար Հակոբյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3.15. ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետը 17.02.2017թ. Գոհար Յուրիկի Հակոբյանին հասցեագրել է թիվ 970 գրությունը հետևյալ բովանդակությամբ. «*Ի պարասիսան Ձեր կողմից 16.02.2017թ-ի Նոր Նորքի ՀՏ ներկայացված դիմումի տեղեկացվում է, որ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկությունների Ձեր կողմից.*

ա) 20.01.2014թ. օտարվել է ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն Լեփսիուսի 5-րդ փողոց 8/4 շենք, 11 բնակարանը, որի պայմանագրային արժեքը կազմել է 33.374.000 ՀՀ դրամ, իսկ կադաստրային արժեքը՝ 5.650.502 ՀՀ դրամ:

բ) 04.08.2014թ. օտարվել է ք. Երևան, Արաբկիր Մամիկոնյանց փողոց 38/3 շենք, 54 բնակարանը (ձեռքբերման ամսաթիվը՝ 28.03.2014թ.), որի պայմանագրային արժեքը կազմել է 49.000.000 ՀՀ դրամ, իսկ կադաստրային արժեքը՝ 8.453.788 ՀՀ դրամ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 կետի բ) ենթակետի համաձայն, անհար ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքում՝ մեկ օրացուցային փարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի

սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում, հետևաբար գրության բ) կետում նշված գույքի օտարման գործարքը համարվում է ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածին համապատասխան Դուք հանդիսանալով ԱԱՀ վճարման պարտավորություն կրող պարտավոր եք ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 19-ի «Ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկները ներկայացնելու, գումարների վճարման կարգը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 199-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմին ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ հարկային տեսչություն Ձեր կողմից 2014թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկ չի ներկայացվել և վճարում չի կատարվել:

Վերը նշված հաշվարկը չներկայացնելու արդյունքում՝ այլ հավասար պայմաններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկման ենթակա հարկային պարտավորության գումարը 17.02.2017 թվականի դրությամբ կազմում է 20.808.744 ՀՀ դրամ գումար, որից հարկ՝ 8.168.300 ՀՀ դրամ, տույժ՝ 4.472.144 ՀՀ դրամ և տուգանք՝ 8.168.300 ՀՀ դրամ:

Նոր Նորքի ՀՏ-ի կողմից Ձեր հաշվառման հասցեին՝ ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն 3, Լեփսիուսի 5 փ. 8/4 11, նախկինում ուղարկվել են ծանուցագրեր, որոնք չեն ստացվել Ձեր կողմից, ուստի դիմումում նշված հասցեին է ուղարկվում ծանուցագիր N 236:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 31.12.2016 թվականին ուժի մեջ մտած «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, ֆիզիկական անձն ազատվում է մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրականացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 կետի բ) ենթակետի համապատասխան

ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար հաշվարկված և չվճարված փողի և փողանքների վճարումից, եթե սույն օրենքն ուժի մտնելուց հետո՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում, կամ մինչև սույն օրենքի ուժի մտնելը կատարել է հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարումը: Ուստի հայտնվում է, որ 31.12.2016 թվականից հետո 90 աշխատանքային օրվա ընթացքում 2014թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկի ներկայացման և ավելացված արժեքի հարկի գումարների վճարման դեպքում Դուք կազարվեք վերոգրյալ գործարքի համար հաշվարկված և չվճարված փողի և փողանքների վճարումից»:

3.16. ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի հարկային տեսչության պետի կողմից 17.02.2017թ. քաղաքացի Գոհար Յուրիկի Հակոբյանին հասցեագրվել է թիվ 236 ծանուցագիրը՝ առաջարկելով 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային տեսչություն ներկայացնել համապատասխան հաշվարկները ու վերոնշյալ գործարքները հաստատող համապատասխան փաստաթղթերի (անշարժ գույքի օտարման պայմանագրերի, սեփականության իրավունքը հաստատող և այլ փաստաթղթերի) պատճենները»:

3.17. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 19.04.2017թ. կայացվել է թիվ 509/01 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, որով մասնավորապես նշվել է՝ «Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի ՀՏ-ի կողմից տրամադրված հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ տեղեկանքի՝ ֆիզիկական անձ Գոհար Հակոբյանի (հասցե՝ ք. Երևան, Գ. Մայրան 112., 11բն, անձ՝ AM0210965) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունը 10.11.2016թ. դրությամբ կազմել է 20.808.744 դրամ, որից ապառք՝ 8.168.300 դրամ, փողով՝ 4.472.144 դրամ, փողանք՝ 8.168.300 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ ֆիզիկական անձ Գոհար Հակոբյանի չկատարված

պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին 08.04.2017 թվականին ֆիզիկական անձ Գոհար Հակոբյան պարտաճանաչվել է, ներկայացել է և տվել է բանավոր բացատրություններ:

Արդյունքում ժամանակին չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 20.808.744 դրամ, որից՝

- ԱԱՀ-ի գծով պարտավորությունը կազմում է 20.808.744 դրամ, որից ապառք՝ 8.168.300 դրամ, տույժ՝ 4.472.144 դրամ, տուգանք՝ 8.168.300 դրամ, որն առաջացել է Նոր Նորքի ՀՏ-ի կողմից 10.11.2016թ. տրամադրված հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ տեղեկանքից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է: Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման»:

3.18. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 19.04.2017թ. թիվ 509/01 որոշումը Բողոք բերած անձը 26.04.2017թ. գանգատարկել է Գանգատարկման հանձնաժողով:

3.19. Գանգատի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017թ. թիվ 29/1 որոշմամբ գանգատը մերժվել է և ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 19.04.2017թ. թիվ 509/01 որոշումը թողնվել է անփոփոխ: Որոշմամբ մասնավորապես նշվել է. «Գոհար Հակոբյանի կողմից 2014թ. ընթացքում օտարվել է երկու բնակարան, ընդ որում՝ երկրորդ բնակարանի օտարումը կատարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ

տարին չգերազանցող ժամանակահատվածում: Մասնավորապես, առաջին բնակարանը (հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի 5-րդ փողոց, 8/4 շենք, բն. 11) Գոհար Հակոբյանն օտարել է 15.01.2014թ., որը ձեռք էր բերել 07.07.2010թ.: Երկրորդ բնակարանը (հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց 38/3, բն. 54) Գոհար Հակոբյանն օտարել է 31.07.2014թ., որը ձեռք էր բերել 24.03.2014թ.:

Հանձնաժողովը գտնում է, որ Գոհար Հակոբյանի կողմից 31.07.2014թ. ք. Երևան, Մամիկոնյանց 38/3, բն. 54 հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում Գոհար Հակոբյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող բնակարանի օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Մասնավորապես, Գոհար Հակոբյանի կողմից 15.01.2014թ. նախ՝ օտարվել է ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի 5-րդ փողոց, 8/4 շենք, բն. 11 հասցեում գտնվող անշարժ գույքը, այնուհետև, 31.07.2014թ. օտարվել է ք.

Երևան, Մամիկոնյանց 38/3, բն. 54 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը ձեռք է բերվել 24.03.2014թ.:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ կողմից կատարվել է Գոհար Հակոբյանի հարկային պարտավորությունների հաշվարկ, որի համաձայն՝ 10.11.2016թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով նրա հարկային պարտավորությունը կազմել է ընդամենը 20.808.744 դրամ: Գոհար Հակոբյանը պարտավոր էր ներկայացնել 2014թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկ և վճարել համապատասխան ԱԱՀ-ի գումարը, ինչը, սակայն, չի կատարվել: Արդյունքում, ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 19.04.2017թ. ընդունվել է թիվ 509/01 որոշումը՝ Գոհար Հակոբյանից 20.808.744 դրամ պարտավորության գումար գանձելու մասին, ինչն իրավաչափ է և բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից»:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը ենթակա է բավարարման** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործի շրջանակներում Հանձնաժողովը էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը՝

- վարչական գործի նյութերով հիմնավորվա՞ծ է արդյոք ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման համար «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «բ» ենթակետով սահմանված բոլոր պայմանների առկայությունը, թե՛ ոչ:

Նշված հարցի առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական մարմնի կողմից կայացված ակտով և դրա համար ձեռք բերված փաստաթղթերով չի հիմնավորվում Բողոք բերած անձի նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «բ» ենթակետի կիրառումը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն, ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության

տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, սույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Օրենքի 3.1.-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, սույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե նրանց իրականացրած գործարքները, սույն օրենքի համաձայն, համարվում են ապրանքի մատակարարում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «բ» ենթակետի համաձայն, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝ *մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:*

Նշված նորմի մեկնաբանությունից հետևում է, որ դրա կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների առկայությունը՝

- թե՛ առաջին, թե՛ հաջորդող գործարքներով տեղի է ունեցել անձի սեփականությունը հանդիսացող գույքի օտարում,

- թե՛ առաջին, թե՛ հաջորդող օտարումները կատարվել են որևէ ձևով հատուցման դիմաց, այսինքն՝ գույքի օտարման դիմաց օտարողը ստացել է կամ պետք է ստանա վճար կամ այլ հանդիպական կատարում,

- գործարքով օտարվել է այնպիսի տեսակի գույք, որպիսի տեսակի գույք՝ բնակարան, առանձնատուն և այլն, նախկինում մեկ օրացույցային տարվա ընթացքում արդեն օտարվել է նույն անձի կողմից,

- գործարքը նույն տեսակի գույքի՝ մեկ օրացույցային տարվա ընթացքում օտարման հերթական գործարք է, որը նույն անձի կողմից իրականացվում է երկրորդ կամ ավելի թվով անգամ,

- գործարքով օտարվել է գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մինչև մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ որպեսզի երկրորդ կամ հաջորդող գործարքով նույն տեսակի գույքի օտարման գործարքը համարվի ապրանքի մատակարարում, օտարվող գույքը պետք է ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Հարկ է նշել, որ նշված դիրքորոշումը՝ օրենքի միատեսակ կիրառման իր սահմանադրական առաքելության շրջանակներում ամրագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը՝ թիվ ՎԴ/0811/05/15 վարչական գործով 26.12.2016թ. կայացված որոշմամբ, նշելով, որ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված գույքի օտարման երկրորդ կամ հաջորդող գործարքն ապրանքի մատակարարում համարելու պեսանկյունից էական է, որ տվյալ գործարքով մեկ օրացույցային տարում թվով երկրորդ կամ հաջորդող անգամ օտարվի այնպիսի գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ նույն օրացույցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարված գույքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերելու ժամանակահատվածը որևէ նշանակություն չունի նույն օրացույցային տարվա ընթացքում հետագայում նույն տեսակի գույքն օտարելու գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար:

Միաժամանակ, վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև օտարման պահի որոշմանը, համաձայն որի՝ կիրառելի է համարել հետևյալ օրենսդրական կարգավորումները՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, շարժական գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

Վերը նշված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վերաբերյալ գործարքները կնքված են համարվում և դրանց նկատմամբ սեփականության իրավունքն անձանց մոտ ծագում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Նշված կարգավորումների շրջանակներում Հանձնաժողովը ևս հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը՝ քննվող վարչական գործի նյութերով հիմնավորված է արդյոք երկու բնակարանների օտարման փաստը, թե՛ ոչ: Մասնավորապես, ուշադրության է արժանի այն փաստը, որ ինչպես ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր Մամիկոնյանց փողոցի 38/3 շենքի թիվ 54 բնակարանի, այնպես էլ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի 5-րդ փողոց, 8/4 շենք, բն. 11 մասով վարչական գործի նյութերում առկա չեն կնքված պայմանագրերից գնորդների

ծագած իրավունքների պետական գրանցումը հավաստող որևէ փաստաթուղթ, որի արդյունքում վիճահարույց է մնում օտարման պայմանագրի կնքված լինելու հանգամանքը, մինչդեռ օտարման պահը էական նշանակություն ունի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «բ» ենթակետի կիրառման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից հարկային պարտավորության գանձման հիմքում դրված օտարման պայմանագրերի կնքման հանգամանքը և պահը, որպիսի հանդիսանում է դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման պահը, որպես անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանք, պետք է ապացուցված լիներ վարչական մարմնի կողմից, ինչն էլ իր հերթին արտահայտվում է դրա առնչությամբ կազմված վարչական գործի նյութերում, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին տրամադրված վարչական գործի նյութերում նման ապացույցներ չեն հայտնաբերվել:

Նշվածից իր հերթին հետևում է, որ Գանգատարկման հանձնաժողովը չի ապահովել գործի փաստական հանգամանքների օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Վերոգրյալից ելնելով Հանձնաժողովը գտնում է, որ առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք, այն է՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, վարչական ակտի փոփոխման

կամ բեկանման հիմքեր են սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

*Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, **1-ին մասի «ա» կետի պահանջներով՝***

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացի Գոհար Հակոբյանի 07.06.2017թ.-ի վարչական բողոքը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017թ. թիվ 29/1 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ հետևյալ բովանդակությամբ. «Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 19.04.2017թ. կայացրած թիվ 509/01 որոշումը՝ քաղաքացի Գոհար Հակոբյանից 20.808.744 դրամ որպես հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումար գանձելու մասին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ